# Հայտ ներկայացնելու հրավեր (ՀՆՀ)

## Վարկ No. 8495-AM (Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման ծրագիր)

## ՀՆՀ No. ETNIP_YTPC_ICB_1/2015

1. Հայաստանի Հանրապետությունը ստացել է ֆինանսավորում Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) կողմից «**Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման ծրագրի**» համար և մտադիր է սույն վարկի միջոցների մի մասն օգտագործել պայմանագրի շրջանակներում իրավասու վճարումների համար՝ ուղղված՝

   **«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ 220/110/35 կՎ ենթակայանի վերականգնմանը**

2. «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն այժմ հրավիրում է ներկայացնել կնքված հայտեր իրավասու հայտատուների կողմից՝

   **«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ 220/110/35 կՎ ենթակայանի վերականգնումն իրականացնելու համար**

3. Հետաքրքրված իրավասու հայտատուները կարող են ձեռք բերել լրացուցիչ տեղեկատվություն «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ից և ստուգել մրցութային փաստաթղթերը աշխատանքային ժամերի ընթացքում (9:00-ից մինչև 17:00 տեղական ժամանակով) ստորև տրված հասցեով:

4. **Պայմանագրի շրջանակներում հայտատուն պետք է բավարարի հետևյալ նվազագույն չափանիշները՝**

   **«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ 220/110/35 կՎ ենթակայանի վերականգնման համար**

- **Ընդհանուր փորձ**

  Փորձը կառուցման պայմանագրերի շրջանակներում՝ որպես կապալառու, ենթակապալառու կամ կառավարում իրականացնող կապալառու առնվազն դիմումների ներկայացման վերջնաժամկետին նախորդող վերջին 10 (տասը) տարիների ընթացքում, ինչպես նաև յուրաքանչյուր տարվա 9 (ինը) ամիսների ընթացքում գործունեության առկայությամբ:

- **Հատուկ փորձ**

  Մասնակցությունը ենթակայանների կառուցման պայմանագրերում որպես կապալառու առնվազն 2 (երկու) նմանատիպ պայմանագրերում վերջին 10 (տասը) տարիների ընթացքում յուրաքանչյուր պայմանգիրը առնվազն 28,7 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ, որոնք բարեհաջող կերպով և

հիմնավորապես ավարտին են հասցվել և որոնք նմանատիպ են (միննույն կամ ավելի բարձր լարմամբ) առաջարկվող պայմանագրին: Նմանատիպ լինելը պետք է հիմնված լինի Բաժին VI-ում (Գործատուի պահանջները) նկարագրված բարդության, մեթոդների/տեխնոլոգիաների կամ այլ բնութագրերի վրա: Բացի այդ, կարևոր է մասնակցությունը որպես կապալառու առնվազն 1 (մեկ) պայմանագրում Հայտատուի կամ ՀՁ անդամի երկրից դուրս, որը պայմանագիրը իրականացրել է վերջին 10 (տասը) տարիների ընթացքում: Այս պահանջը հնարավոր է բավարարել՝ մատնանշելով համապատասխան միջազգային փորձը որպես կապալառու կամ որպես ՀՁ անդամ կառուցման պայմանագրերում (պարտադիր չէ, որ առնչվեն ենթակայանի կառուցմանը), որոնք իրականացվել են պայմանագիրն իրականացնող Հայտատուի կամ ՀՁ անդամի երկրից դուրս:

Վերը նշված ժամանակահատվածում իրականացված պայմանագրերի համար կապալառուն պետք է ունենա փորձառություն առնվազն հետևյալ հիմնական աշխատանքների մասով՝

- 220 կՎ ենթակայանի (բարձր և ցածր լարման սարքավորումներ) նախազծում, կառուցում, տեղակայում և գործարկում
- 110 կՎ ենթակայանի (բարձր և ցածր լարման սարքավորումներ) նախազծում, կառուցում, տեղակայում և գործարկում
- Միջին լարման ենթակայանի (միջին և ցածր լարման սարքավորումներ) նախազծում, կառուցում, տեղակայում և գործարկում

- **Անցյալում ֆինանսական արդյունքները**

Աուդիտի ենթարկված հաշվեկշիռները կամ եթե չի պահանջվում հայտատուի երկրի օրենքով, ապա այլ ֆինանսական հաշվետվություններ վերջին 5 (հինգ) տարիների ընթացքում, որոնք ընդունելի են Գործատուի համար՝ մատնանշելու հայտատուի ֆինանսական վիճակի ընթացիկ կայունությունը, ինչպես նաև նրա հեռանկարային երկարատև շահութաբերությունը, որոնք պետք է կցվեն հայտին:

- **Միջին տարեկան շրջանառություն**

51 մլն ԱՄՆ դոլարի չափով տարեկան նվազագույն միջին շրջանառություն՝ հաշվարկված որպես ընդհանուր հավաստագրված վճարումներ, որոնք ստացվել են ենթակայանի ընթացքի մեջ գտնվող կամ ավարտված պայմանագրերի համար վերջին 3 (երեք) տարիների ընթացքում:

- **Ֆինանսական ռեսուրսներ**

Հայտատուն պետք է ցույց տա հասանելիությունը ֆինանսական միջոցներին կամ դրանց առկայությունը, ինչպես օրինակ՝ լիկվիդային ակտիվները, չգրավադրված իրական ակտիվները, վարկային գծերը, ինչպես նաև այլ ֆինանսական միջոցներ, որոնք տարբեր են պայմանագրային կանխավճարներից՝ բավարարելու հետևյալ դրամական հոսքերի պահանջները՝

(i) 8,5 մլն ԱՄՆ դոլար՝ որպես դրամական հոսքերի պահանջ

(ii) Ընդհանուր դրամական հոսքերի պահանջներ սույն պայմանագրի և դրա ընթացիկ պարտավորությունների համար:

- Հայտատուն պետք է կից ներկայացնի աֆիդավիտ առ այն, որ սնանկության հայտարարված կամ կազմակերպված կամ իր ընկերության ակտիվների նկատմամբ հարուցված դատական գործի դեպք առկա չէ, ինչպես նաև ընկերությունը լուծարման գործընթացի մեջ չէ։
- Հայտատուն պետք է ունենա հավաստագրում՝ ըստ ISO 9001 և ISO 14000 կամ համարժեք ստանդարտի, ինչպես նաև որակի ապահովման և բնապահպանական ապահովման համակարգերի նկարագրությունը։

5. Մրցութային փաստաթղթերի ամբողջական փաթեթը կարող են գնել շահագրգիռ իրավասու հայտատուները՝ ներկայացնելով գրավոր դիմում «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ անունով՝ խնդրելով վերոնշյալի մասին և վճարելով չփոխհատուցվող վճար 400 ԱՄՆ դոլարի կամ համարժեք ՀՀ դրամի չափով ստորև նշված հաշիվներին՝ ըստ վճարման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի փոխարժեքի։ Մրցութային փաստաթղթերը կուղարկվեն էքսպրես ավիափոստով կամ կհանձնվեն հայտատուի լիազորված ներկայացուցչին չփոխհատուցվող գումարի վճարումը հավաստող բանկային փաստաթղթերը ստանալուն պես, սակայն «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն որևէ կերպ պատասխանատվություն չի կրում փոստային այդ առաքմամբ ուղարկված փաստաթղթերի ուշ առաքման կամ կորստի համար։

<u>Վճարումների համար հաշիվները՝</u>

Հայաստանի ոչ ռեզիդենտների համար (վճարումը ԱՄՆ դոլարով)՝

ՇԱՀԱՌՈՒ՝ «ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ
ՀԱՇԻՎ՝ 2473600002170020
ՇԱՀԱՌՈՒԻ ԲԱՆԿ՝
ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ, ՇԵՆԳԱՎԻԹ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ, Երևան, Հայաստան
SWIFT Code՝ ASHBAM22
ՄԻՋՆՈՐԴ ԲԱՆԿ՝
ՀԱՇԻՎ No. 36209105
CITIBANK, NA
SWIFT Code՝ CITIUS33

Հայաստանի ռեզիդենտների համար (վճարումը ՀՀ դրամով)՝

ՇԱՀԱՌՈՒ՝ «ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ
ՀԱՇԻՎ՝ 2473600002170010
ՇԱՀԱՌՈՒԻ ԲԱՆԿ՝
ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ, ՇԵՆԳԱՎԻԹ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ, Երևան, Հայաստան
SWIFT՝ ASHBAM22

6. «Յուցումներ հայտատուներին»-ի և պայմանագրի ընդհանուր պայմանների դրույթները հանդիսանում են Համաշխարհային Բանկի ստանդարտ մրցութային փաստաթղթերի («Կայանի նախագծման, մատակարարման և տեղակայման ձեռքբերում») դրույթներ (հրապարակված 2008 թ.-ի ապրիլին, վերանայված 2015 թ.-ի ապրիլին)։ Միջազգային մրցույթը կանցկացվի՝ համաձայն Համաշխարհային Բանկի մեկ փուլով մրցութային ընթացակարգի։

7. Նախամրցութային հանդիպումը կանցկացվի «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ գրասենյակում տեղական ժամանակով ժամը 13:00-ին, 2015թ.-ի հոկտեմբերի 28-ին ստորև նշված հասցեով։

8. Հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով տեղական ժամանակով մինչև ժամը 13:00, 2015թ.-ի նոյեմբերի 10-ին և պետք է ուղեկցվեն 720 000 (յոթ հարյուր քսան հազար) ԱՄՆ դոլարի չափ հայտի երաշխիքով։

9. Հայտերը կբացվեն հայտատուների ներկայացուցիչների ներկայությամբ, ովքեր կնախընտրեն մասնակցել տեղական ժամանակով ժամը 13:30-ին, 2015թ.-ի նոյեմբերի 10-ին «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ գրասենյակում ստորև նշված հասցեով։

10. Ամբողջ հաղորդակցությունը վերը նշվածի կապակցությամբ պետք է իրականացվի հետևյալ հասցեով՝

**«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ**
**Ի ուշադրություն պրն Հովակիմ Հովհաննիսյանի, գլխավոր տնօրեն**
**Հասցե՝ Արին Բերդ 3-րդ նրբանցք, թիվ 3**
**Երևան, 0053**
**Հայաստանի Հանրապետություն**
**Հեռ.՝ +374 10 47-27-60**
**Ֆաքս՝ +374 10 47-27-71**
**Էլ. փոստ՝ mailbox@yccpp.com**

11. Սույն հայտ ներկայացնելու հրավերը կհրապարակվի նաև գնումների հայկական պորտալում հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ www.procurement.am։ Մրցութային փաստաթղթերը PDF ձևաչափով, ինչպես նաև տեխնիկական աղյուսակները MS Word ձևաչափով ևս պետք է տրամադրվեն այն հայտատուներին, որոնք գնել են մրցութային փաստաթղթերը։